բացրնեցաց և Ս. Յովհաննէս վանքի և դպրոցի նորոգման յատկացուցեր են, մէկ մասն ալ կ. Պոլսոյ Միացեալ-ընկերութեանց»։— Ազգ. ժողովոյ գոհ ըլլալը մեզ անհասկանալի մնաց, վասն զի կերպի թէ ոչ ժողովը թող հարցուցած ըլլալը գիտէ, ոչ էջմիածին թող բանի պատասխան տուած ըլլալը. վասն զի կոնդակը կեղրակացնել թէ հզուշէ այս գուշարն է որ ժողովոյ անկնդէ ու միաձայն գիտողութեանց ենթակայ եղած է։»— Հայուական խնդրոց մէջ գ ո ւ ց է բառը ոչանդի չատ սխորժ չը հնչէր։—

Սոյ կաթողիկոսին հետ հայուական գործ մը չունինք, բայց չատ անհանգարտ է. ի՞նչ միտք ունի, թող է Նպատակը. կ. Պոլիս գտնուող Պիլիկիացիներէն ժողով կազմելով անոնց աթոռակցութեամբը կուզէ գործել. ոմանք ալ կըսեն թէ այս ճամբով գործէն կուզէ քաշուիլ, վասն զի չատ նեստուկցաւ։ իսկ ազգային պաշտօնական չրջանակներու կարծիքն է թէ պէտք է թող տալ որ Սոյ կաթողիկոսը անարգել գործէ. թող նա գրէ Բ. Դրան Նախարարաց, խնդրէ նոցա աթոռակցութիւնը Պիլիկիոյ աթոռը բարձր պահելու համար և նոր իրաւունքներ չնորհելու նոա, որպէս զի անկախ ըլլայ կ. Պոլսոյ պատրիարքէն որ Էջմիածնայ ուղղակի իրաւասութեան ներքն է։ Դուռը և Պատրիարքարանը չատ մը յոյսեր անուշա պիտի տան կաթողիկոսին, զի քանի որ մեր մէջ երկպառակութիւն ձգելու վրայ է խնդիրքը. չատ շատ են, բայց ոչ մի խստաւում իրագործելու հնարամուտ պիտի ըլլան, ոչ ալ կամք պիտի ունենան, որով կաթողիկոսը լուիկ մնէլիկ իր տեղը պիտի գտնայ. այսչափ ժամանակ խնդռ ժողովուրդը անխնամ թողնելէն վերջ։ Նայենք գեռ որչափ տարեն կը կենայ։ Կաթողիկոսը Անգլիոյ գեսպանին ալ այցելութիւն մը տուաւ. Հայկապ անգլիական հիւպատոսի կողմէն ունեցած յանձնարարական գրերովը կը յուսայ Անգլիոյ գեսպանը իր ձեռնարկներուն բարեկամ ընել։ Բայց հաւանական չէ որ գեսպանը ուզենայ ինքզ պաշտպանութիւն մը ընել կաթողիկոսին համար։ Բ. Դուռը ազէկ աչքով մը չը տեսնէր Պիլիկիոյ կողմերը Անգլիոյ ազդեցութեան մտնելը և կը վախի թէ այդ ազդեցութեամբ նոր 61-ոդ յոդուածի մը պէտքն ալ Պիլիկիոյ համար զգացուի։ Անգլիոյ գեսպանը որ արդէն բաւական գինուոր հարցեր ունի լուծելու, հիմիու հիմա նոր հարց մալ ուելցնելու պէտքը չը զգար։— Յունական խնդիրը արդէն բաւականէն աւելի ոգ կուտայ. ամեն օր գեսպանական գուսարաններ տեղի ունին, կը կարծուի թէ իրրեւ գիտցուած Բ. Դուռը պիտի առաջարկէ Թեսալիայէն խիստ հարկաւոր մասը Յունաստանի տալ ապանց Եպիրոսէն բան մը տալու։ Շատերը կը յուսան, մանաւանդ Անգլիոյ գեսպանատունը որ այս խնդիրը երեք չորս չաբաթներու մէջ բոլորովին կը վերջանայ խաղաղութեամբ և անմիջապէս հայկական հարցը ձեռք կառնուն։ Ուրեմն հիմիու հիմա հայկական հարցի մասին նոր լուրերու չը սպասենք և համբերենք քանի մը չաբաթներ. ով գիտէ որչափ երկար, պիտի տեսէ, գրչաի գաղտնիքներ պիտի ունենանք, որ բոլոր թրքական թոյնը այս հարցը սպանելու պիտի գործածուի։

Դեսպանները, կաթոլիկ սէրութեանց դեսպանները. գիր չատ կենտրոն խնդիրէ մը ազատցան։ Այսոր հանգունեցանք և հանգարտաստեղծեցան վերջնական ֆետրով հաշուեցան։ Հանգարտաստեղծեցան քանանայք մի քանի օր փոքրիկ ապաշխարանաց գաստապարտուեցան. երբու կողմէ փոխադարձ գիջումներ տեղի ունեցան և միութեան պայմանագիրը ստորագրուեցաւ։ Գիր տեսնէն պարտիարքը կընդարձն, հանգանքներն ալ գրեան գերագոյնս։ Այս երկարամանակեայ վէճը իր օգուտները ունեցաւ, ազգասական գաղափարները բաւական թափանցեցին հանգիստական հայ ժողովուրդի սրտին մէջ, ազգային ըզգացումը արթնցաւ։—Մեր գիտցուութիւնն է, առանց կրօնական խնդրոյ վրայ քաւ մը արտասանելու, մինչ ջանալ որ նոցա հայրենասէր մասին աչքէն լինելով աշխատանք որ ազգի և հայրենեաց սէրն ու գաղափարը օրըստօրէ տարածուի. Դժբաղդ պարագաներ բաւական անդրդեւ մը գրած են մեր մէջ. չատ գժուարութիւններ կան որոց պէտք է յաղթենք. Այդոնք մեր Կ. Պոլսոյ թերթերը ունեցեր պիտի մէջի թոգուն այն անպէտ ընթացքը որ ոչ չատ առաջ ունեցան.—«Մ ա ս ի ս» երբ կուզէր նախասել թ է ր ճ ե մ ա ն ը, գու պատրաստ ես կրնէր։—Աւելի խելացութիւն մաղթենք ամենուն։

Հայկակ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դաւրէժ, 28 փետրվարի

Մենք՝ հայերս՝ գրեթէ ազգային տաներ չունենք, մենք ունենք միայն կրօնական տաներ բաց եկեղեցական տօմարի։ Մի ազգ, որ ձգտում է ներկայ դարուս մէջ իր ազգութեան գոյութիւնը պահպանել, պէտք է որ մի քանի ուրիշ յատկութեանց հետ ես ունենայ ազգային յատուկ տաներ։ Մեր ազգն էլ այս վերջին մի քանի տարուայ մէջ իր հիւանդոտ դրութիւնից հաղիւ հազ թոյլ ոտքերի վրա կանգնելով, զգաց՝ թէ վերջապէս ինքն էլ մի պատմական հին ազգ է. ըզգաց՝ թէ ինքը անցեալի մէջ մեծ կորուստներ է ունեցել, որոնք այլ ես չեն վերադառնայ. վայ, ափսոս և աւելի հառաչանքներով, զգաց՝ թէ տրխուր անցեալը իրան կենդանութիւն չի տայ, այլ խրատ և օրինակ միայն կարող է լինել. և վերջապէս զգաց՝ թէ իրրեւ ազգ ապրելու համար, հարկաւոր է կրթութեան հետ անթերի ազգութեան ամրոցութիւն իր բոլոր լաւ կողմերով։ Մեր ազգի մեծամասնութեան այսպիսի լաւ բաներ մտածելու ժամը, ինչպէս տաւում են՝ բարի ոգեաթի է եղել, այն էլ բարեկենդանի օրերում, և թող էլ կարծում, ասա, խեղճ Ս. վարդանանց նահատակութեան տօնը՝ պատկերանում է ազգի առաջ.—թէ ասա, ես այստեղ կանգնած եմ.—նա այսուհետև քեզ ազգային տօն կարդեցի, որովհետև, դու մի սուրբ յիշատակ ես, դու մի պայծառ տօն ես, տաւում է ազգը և էլ բաց չէ թողնում. թէև Ս. վարդանանց տօնը կրօնական բնաւորութիւն ունի, բայց նա միայն չէ եղել կրօնքի համար, այլ եղել է և ազգութեան և հայրենիքի համար։ Հենց այդ է պատճառը, որ այդ մեծարելի տօնը այդչափ յարգվում է հայերից։ Այժմս համարեա թէ բարձրաթիւ հայաստան գաղութներում Ս. վարդանանց տօնը խիստ փառաւոր հանդէսներով են կատարում եկեղեցականք և աշխարհականք միասին։ Ազգային տաները մեծ ազդեցութիւն ունեն ամեն հասակի մարդկանց և մանաւանդ նոր սերունդի վրա, որովհետև փառում են և բարդրում մի ազգի գանազան մասաւոր և հնաւոր անհատների արտի հանդատ հուրը, տալով նրանց մի նոր ազգային ոգի, նոր եռանդ։ Ամենաւուատարեալ ազգերը, մինչև անգամ, մեծ յարգանքով են վերաբերվում դէպի իրանց ազգային չատ սիրելի տաները, և մենք յոյս ունենք, որ այսուհետև մեր ազգի համար էլ այդպէս կը լինի։ Մեր թաւրիզի հայ հասարակութիւնն էլ անցեալ տարուանից արդէն սովորութիւն է արել Ս. վարդանանց համար տան կատարելը։ Անցեալ 19-ին քաղաքիս մայր եկեղեցու մէջ, մեր ազգային նահատակների համար, պատարագից յետո հանդուսաւոր պաշտօն կատարվեցաւ, որից յետո եկեղեցական դասը ժողովուրդի հետ մտան Արամեան դպրոցի բակը, ուր Ս. Գրիգոր լուսաւորիչի տօնին յատկապէս մի տաներ կարդացուեցան, որոնց միջոցներում դպրոցի աշակերտները ազգային երգեր էին երգում։ Հանդէսը տեսնց մինչև ժամի 10-ը և վերջացաւ մի հանդէս նախաճաշով, որը պատրաստել էին մի քանի հաստատ և յարգելի երիտասարդներ իրանց ծախքով։

Այդ հանդիսից մի օր յետո, փետրվարի 20-ին, մեր թատերական խումբը ներկայացրեց իր երրորդ և վերջին ներկայացումն «Շուշանիկ» և Մոլիէրի «Le medecin volant» գործը։ Գէպք է ասել, որ ոչ թէ միայն մեր ներկայացումները բաւարար կերպով յաջողվում են, այլ և մեր հայ հասարակութիւնն էլ լաւ է վերաբերվում դէպի թատրոնը։ Այս վերջին ներկայացման ժամանակ բոլոր տեղանքները վաճառված էին, բոլոր բոժանները և աթոռները բռնված էին։ Ցաւում ենք չատ որ ներկայացնելի օգտակար պիեսներ չունենք ոչ մեր երկրի հայոց կեանքից և ոչ գոնէ մեր նովկատեան հայերի տիպերից, որոնք կարդանային մեր տեղային հայերի միտքը բացանել, մշակել և ընդարձակել, պատկերացնելով ժողովրդի աչքի առաջ ներկայ կեանքից, ներկայ հանգամանքներից վերցրած կենդանի տիպեր և պատկերներ։ Մենք այս օրերս Թիֆլիսից ստացանք պ. Ա. Մ. Նալբանդեանից և պ. Ս. Օտենեանից մի քանի հատոր գրքեր՝ ընծայ յանուն ազգային ընթերցարանին Դաւրէժի։ Շնորհակալութիւն յայտնելով յիշեալ պարոնների, մենք յոյս ունենք, որ նրանք օրինակ կը լինեն Թիֆլիսի և Ռուսաստանի հայ հեղինակներին և թարգմանիչներին դէպի մեր ազգային ընթերցարանը։ Եթէ մեր յարգելի հեղինակները կամք կունենան այդպիսի շնորհներ անելու, լաւ կը լինի որ իրանց ընծաները յանձնեն Թիֆլիսում բնակվող թաւրիզցի վաճառական պ. Ս. Ցէր-Օհանեանցին։ Մենք կը խնդրէինք տագանդաւոր պ. Սունդուկեանցին, որ ինքն էլ մեր նորաստեղծ թատրոնը յիշէր։ Շնորհակալութիւն ենք յայտնում պ. Ա. Յովհաննիսեանցին, որ քանի տարի չարունակ իր «Փորձ» տետրակը ձրիապէս ուղարկում է մեր ընթերցարանին։

Երկու տարի առաջ Թիֆլիսում մի «Լրագրական» անունով ընկերութիւն հիմնվելով, բաւական թուով «Մշակ և Մեղու» լրագիրները ձրիապէս տարածում էր Պարսկաստանի բոլոր հայաբնակ գաւառները։ Նա թէև չեմ ուզում չարագուշակ լինել, բայց այժմս, որպէս երևում է, այդ ընկերութիւնն էլ իր հոգեարքի մէջն է և երանի թէ նա խաբված լինէր։ Բայց մթթէ մեր հայերը ուխտել են, որ ոչ մի ազգաշահ և ուսումնասիրական գործ երբէք հաստատ հիմք չունենար իրանց մէջ. մթթէ նրանք իրանց ձեռնարկութիւնները նմանացրել են վաղանցուկ ասուպներին, որոնք հաղիւ իրանց գոյութիւնը ցոյց են տալիս հորիզոնում և յետոյ խոյսն ալանալով անհետանում են անհունութեան մէջ. թողնելով երկնակամարի վրա մի ոգոտ լոյսի հետք, մի տխուր երեոյթ, որ նոյնպէս չուտով չքանում է։ Մեր Ռուսաստանի հայերը գոնէ այն առաւելութիւնը ունեն, որ իրանց բոլոր սկսած գործերը հաստատ հիմունքների վրա են դնում, աշխատելով նրանց ուելի և ուելի զարգ տալ, հակառակ թիւրքիստանի հայերի ազգային ձեռնարկութեանց, որոնք ընդ միշտ հիմնվում են յոյսերի վրա, խարուսիկ յոյսերի վրա։

Օդերը մեզ մեր լաւ են անցնում. ձիւնապատ և անձրևային։ Գարունը նպատաւոր է երևում. լաւ տեսա և առաջ հուսա կունենանք եթէ որ մի ուրիշ նոր փոթորիկ չի հանդիպի։ Շէյխը քշնած չէ. նա թէև զսպված է, բայց գազազողի մասնանարում է իր ցեղը՝ դէպի մի նոր քրդական ապստամբութիւն։ Մեր կողմերում այլ ընդ այլոյ խոսքեր լսվում են քիւրդերից, բայց հաստատ գեռ նշանչ չը կայ։ Պարսից կառավարութիւնն էլ այս անգամ նրանց խոսքս կը պատժէ, եթէ մի որ և իցէ նոր ապստամբութիւն կը լինի քիւրդերի կողմից։

Վենետիկ Շահի վիլլայի գեսպան հայազգի գենէրալ Նարիման-խանը, որ կանչված էր թէհրան, մի քանի օրից յետո կը վերադառնայ իր պաշտօնատեղին՝ Թիֆլիսից անցնելով։

Արմենակ

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Ներքին գործերի մինիստրը որոշեց. „Петерб. Вѣд.“ լրագրի № 67 մէջ տպված առաջնորդող յօդուածի պատճառով լրագրի խմբագրին և յօդուածագրին գատաստանական պատասխանատուութեան ենթարկել պատիմների կանոնագրութեան 281 և 1035 յօդուածների հիման վրա։ Երէկ հասան Ս. Պետերբուրգ Ուէլսի իշխանը և իշխանուհին, գերմանական թագաժառանգը և աւստրիական գուքս Կարլ-Լիւդվիգ։

ԼՕՆԴՈՆ, 13 մարտի։ Հանդիսարանների ժողովի մէջ Դիլկ յայտնեց, որ Ռուսաց Նոր թագաւորը լեա կանչեց գեներալ Սկոբելևին և մի և նոյն ժամանակ հրամայեց գադարեցնել գործողութիւնները Միջին Ասիայի մէջ։ Մինիստր Հարթինգտոն փոստայով գժոխային մեքենայ ուղարկեցին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Գեսպան բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէք 96 ր., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսերը արժէք 224 ր. 25 կ., երկրորդ 216 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէք 92 ր. 37 կ., երկրորդ 92 ր. 5 կ., երրորդ 92 ր. 12 կ., ոսկի 7 ր. 94 կ.։ Ռուսաց 1 բուրլ Լօնդոնի վրա արժէք 24,75 պէնս, Ամստերդամի վրա 125,75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէք 211 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 262 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մարտի։ Կառավարական հաղորդութիւն. Մարտի 10-ին Ս. Պետերբուրգի մէջ կախաղանաւորված է Սոֆիա Պերովսկայա, որ թագնվում էր 1878 թուականից։ Իր խստասրտութեան համեմատ նա մասնակցում էր 1879 թ. Նոյեմբերի 19-ի եղեռնագործութեան փորձին Մոսկվայի մտ և Ֆելեսարովին կախաղանաւորելուց յետոյ առաջնորդում էր մարտի 1-ի եղեռնագործութեանը։ Սոֆիա Պերովսկայա գատաստանի ենթարկվելի յետոյ եղեռնագործութեանը միւս մասնակցողների հետ։ Այսօր թագաւորի ներկայութեամբ կատարված հոգեհանգիստին Պետրոպաւլովսկայա մայր-եկեղեցու մէջ ներկայ էին բոլոր պատգամաւորութիւնները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտի։ Այսօր հրատարակված է հետևեալ մանիֆեստ. Բարձրանալով համայն Ռուսաստանի Մեր Նախնական Գահի վրա, Մենք, հոգալով Նախախնամութենից Մեզ յանձնված պետութեան պաշտպանութեան, հանգստութեան և բարօրութեան մասին, հետևելով Մեր Անմոռանալի Նախորդների Նիկոլայ I-ի և Ալէքսանդր II-ի օրինակին, որոնց պարտականութիւն համարեցինք առաջուց ցոյց տալ այն միջոցները, որոնք պէտք է գործադրվեն արտաքոյ կարգի դէպքերի ժամանակ։ Ի նկատի ունենալով Մեր ժառանգ Մեծ Իշխան Նիկոլայ Ալէքսանդրովիչի անչափահասութիւնը, կայսերութեան հիմնական օրէնքների համեմատ կայսրական ցան մասին, վճռեցինք և յայտնում ենք ամենքին հետևեալը. 1) Եթէ մենք փախճանվենք առաջ քան թէ Մեր Սիրելի Որդին հասնի օրէնքով որոշված հասակին կայսրների չափահասութեան համար, մինչև նրա հասնելը չափահաս հասակին Մեր Սիրելի եղբայր Վլադիմիր Ալէքսանդրովիչին նշանակում ենք կառավարիչ պետութեան և նրա հետ անբաժան Լեհական թագաւորութեան և Ֆինլանդական իշխանութեան։ 2) Եթէ Նախախնամութիւնը Մեր փախճանից յետոյ կը կամենայ իր մտ կանչել Մեր Անգրանիկ Որդուն, առաջ քան թէ նա կը հասնի չափահասութեան, այն ժամանակ ժառանգական օրէնքների համեմատ Ռուսաստանի գահի վրա Մեր երկրորդ Որդու բարձրանալուց յետոյ Մեր Սիրելի եղբայր Վլադիմիր Ալէքսանդրովիչ պէտք է ստայ պետութեան կառավարիչ մինչև Մեր երկրորդ որդին հասնի չափահասութեան։ 3) Այս մանիֆեստի 1 և 2 յօդուածներով որոշված բոլոր դէպքերի ժամանակ Մեր Անգրանիկ Որդու և միւս երեխաների հոգաբարձութիւնը մինչև նրանցից իւրաքանչիւրը հասնին չափահասութեան պատկանում է Մեր Սիրելի Ամուսին Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնային օրէնքից որոշված ոյժով և չափով։ Վճռելով և հրատարակելով Մեր այդ կամքը և դիտաւորութիւնները պետութեան կառավարութեան մասին Մեր ժառանգի անչափահասութեան ժամանակ, Մենք, յարգելով Մեր հայրենիքի օրէնքները և առաջուց այդ գործի մասին կատարածների առաջն առնելով, խնդրում ենք Բարձրեալից՝ օրհնել մեր անընդհատ աշխատանքները Աստուածանից Մեզ յանձնված պետութեան բարօրութեան, հզօրութեան և բազդաւորութեան համար։ Ստորագրված է՝ Ալէքսանդր։

ԲՈՒԻՍԱՐԵՍՏ, 14 մարտի։ Ազգային ժողովը ընդունեց ուսաջարկութիւնը բուքնական իշխանին թագաւորական տիտղոսը յատակացնելու մասին։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԷՐՈՒՆԻ